ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-20/2016

Պետության կարիքների համար Հայաստանի Հանրապետության միջպետական եվ հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային եվ ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների կատարման

ք. Երևան <<27>> հունվարի 2016թ.

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Գ. Գրիգորյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և 18.11.2015թ.-ի կնքված համատեղ գործունեություն համաձայնագրով գործող «ՍԻՍԻԱՆԻ ՃԱՆՇԻՆ» ՍՊԸ (այսուհետև՝ Գործընկեր 1) և «ՍԻՍԻԱՆԻ ԲՈՒԱՏ» ՍՊԸ (այսուհետև՝ Գործընկեր 2) կոնսորցիումը (այսուհետև՝ Կոնսորցիում), ի դեմս Գործընկեր 1-ի տնօրեն՝ Հ. Գաբրիելյանի և Գործընկեր 2-ի տնօրեն՝ Ա. Անդրեասյանի, ովքեր գործում են ընկերությունների կանոնադրությունների և 18.11.2015թ.-ի կնքված համատեղ գործունեություն համաձայնագրի հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով 2015թ. դեկտեմբերի 21-ին կնքված ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-20 գնման պայմանագիրը (այսուհետև՝ Պայմանագիր) կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. **Համաձայնագրի առարկան և գործողության ժամկետը**

1.1 Կապալառուն պարտավորվում է Պայմանագրով և սույն Համաձայնագրով սահմանված կարգով Պատվիրատուի հանձնարարությամբ իրականացնել Պայմանագրով նախատեսված Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանքներ)՝ համաձայն սույն Համաձայնագրի N 1 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի և Աշխատանքների արդյունքը հանձնել Պատվիրատուին, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Աշխատանքները և վճարել դրանց համար:

1.2 Աշխատանքների հանձնում-ընդունումը կատարվում է Պայմանագրով սահմանված կարգով՝ կարգի պահանջներին համապատասխան:

1.3 Սույն համաձայնագրով սահմանված պարտավորությունները տարածվում են 2016 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա և գործում են մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

1.4 Սույն Պայմանագրով սահմանված 2016 թվականի դեկտեմբերի 20-ից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը կատարված աշխատանքների համար վճարումը կիրականացվի հաջորդող տարիներին միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով:

2. **Համաձայնագրի գինը և վճարման կարգը**

2.1 Սույն պայմանագրով Կատարողի կատարման ենթակա Աշխատանքի 2016 թվականի համար ընդհանուր գինը կազմում է 132 576 611 (մեկ հարյուր երեսուներկու միլիոն հինգ հարյուր յոթանասունվեց հազար վեց հարյուր տասնմեկ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Պատվիրատուն իրեն հանձնված Աշխատանքների դիմաց վճարում է Պայմանագրով նախատեսված կարգով՝ սույն Համաձայնագրի N 2 հավելվածին՝ ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցին համապատասխան:

3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները, այդ թվում Աշխատանքների հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

3.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.3 Սույն համաձայնագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1 և 2 հավելվածները հանդիսանում են սույն համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.4 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ	
ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն ք. Երևան, Նալբանդյան 28 Կենտրոնական Գանձապետարան Հ/Հ 900011012136 ՀՎՀՀ 02565518	Գործընկեր 1՝ «ՍԻՍԻԱՆԻ ՃԱՆՇԻՆ» ՍՊԸ Սյունիքի մարզ գ. Շաքրի «Արդշինբանկ» ՓԲԸ, Սիսիան մ/ճ Հ/Հ 24715000879200000 ՀՎՀՀ 09802399	Գործընկեր 2՝ «ՍԻՍԻԱՆԻ ԲՈՒԱՏ» ՍՊԸ ք. Սիսիան, Խանջյան 2 «Կոնվերսբանկ» ՓԲԸ Հ/Հ 1930011791110100 ՀՎՀՀ 09802793
(ստորագրություն)	(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ	Կ.Տ

2016թ. կնքված
N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-20/2016 համաձայնագրի

Գնման ժամանակացույց

/ՀՀ դրամ/

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	Գնումը՝ 2016թ				Ընդամենը
		I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ	
1	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների	35,499,366,0	39,691,081,0	35,280,961,0	22,105,202,0	132,576,611,0

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
ք. Երևան, Նալբանդյան 28
Կենտրոնական Գանձապետարան
Հ/Հ 90001012136
ՀՎՀՀ 02565518

(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

Գործընկեր 1՝
«ՍԻՍԻԱՆԻ ՃԱՆՇԻՆ» ՍՊԸ
Սյունիքի մարզ, գ. Շաքիի
«Արդշինբանկ» ՓԲԸ, Սիսիան մ/ճ
Հ/Հ 24715000879200000
ՀՎՀՀ 09802399

(ստորագրություն)
Կ.Տ

Գործընկեր 2՝
«ՍԻՍԻԱՆԻ ԲՈՒԱՏ» ՍՊԸ
ք. Սիսիան, Խանջյան 2
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930011791110100
ՀՎՀՀ 09802793

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 2
2016թ. կնքված
N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-20/2016 համաձայնագրի

Ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույց

/ՀՀ դրամ/

Հ/Հ	Ձեռքբերվող աշխատանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2016թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												Ընդամենը տարի
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1	Հայաստանի ՀանրապետությանՍյունիքի մարզի Սիսիանի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների	24,849,556,0	24,849,556,0	24,849,556,0	61,298,569,0	61,298,569,0	61,298,569,0	99,887,121,0	99,887,121,0	99,887,121,0	132,576,611,0	132,576,611,0	132,576,611,0	132,576,611,0

Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
ք. Երևան, Նալբանդյան 28
Կենտրոնական Գանձապետարան
Հ/Հ 900011012136
ՀՎՀՀ 02565516

(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

Գործընկեր 1՝
«ՍԻՍԻԱՆԻ ՃԱՆՇԻՆ» ՍՊԸ
Սյունիքի մարզ, գ. Շաքիի
«Արդշինբանկ» ՓԲԸ, Սիսիան մ/ճ
Հ/Հ 2471500087920000
ՀՎՀՀ 09802399

(ստորագրություն)
Կ.Տ

Գործընկեր 2՝
«ՍԻՍԻԱՆԻ ԲՈՒԱՏ» ՍՊԸ
ք. Սիսիան, Խանջյան 2
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930011791110100
ՀՎՀՀ 09802793

(ստորագրություն)
Կ.Տ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ԱՄԱՌԱՅԻՆ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ՁՄԵՌԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ԳԱԿ-ԾՀԱՇՁԲ-15/1-ՏՄԻԳ-16/1-20»

ք. Երևան «21» 12 2015թ.

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Գ. Գրիգորյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և 18.11.2015թ.-ի կնքված համատեղ գործունեություն համաձայնագրով գործող «ՍԻՍԻԱՆԻ ՃԱՆՇԻՆ» ՍՊԸ (այսուհետև՝ Գործընկեր 1) և «ՍԻՍԻԱՆԻ ԲՈՒԱՏ» ՍՊԸ (այսուհետև՝ Գործընկեր 2) կոնսորցիումը (այսուհետև՝ Կոնսորցիում), ի դեմս Գործընկեր 1-ի տնօրեն՝ Հ. Գաբրիելյանի և Գործընկեր 2-ի տնօրեն՝ Ա. Անդրեասյանի, ովքեր գործում են ընկերությունների կանոնադրությունների և 18.11.2015թ.-ի կնքված համատեղ գործունեություն համաձայնագրի հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և կատարման ժամկետ է սահմանվում մինչև՝ 31.12.2020թ.-ը ներառյալ:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանք.

ա) Չընդունել Աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Աշխատանքը սույն պայմանագրին համապատասխանող Աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված Աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված Աշխատանքի արդյունքը, իսկ Աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 3 /երեք/ օրինակ (Հավելված N 2) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 2.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 40 /քառասուն/ օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի կատարման ենթակա Աշխատանքի 2016 թվականի համար ընդհանուր գինը կազմում է 132 576 611 (մեկ հարյուր երեսուներկու միլիոն հինգ հարյուր յոթանասունվեց հազար վեց հարյուր տասնմեկ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1 2017 և հաջորդող տարիներին աշխատանքները կկատարվի ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով: Աշխատանքի կատարման համար տվյալ տարվան հաջորդող տարվա ընթացքում միջոցներ չնախատեսվելու դեպքում, այդ մասով պայմանագիրը կլուծվի:

4.2 Պատվիրատուն կատարված Աշխատանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Գործընկեր 2-ի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա կողմերի միջև կնքվելիք լրացուցիչ համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով

նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան կողմերի միջև լրացուցիչ համաձայնագրի կնքման տարվա դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման և պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցների նախատեսման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը կլուծարվի, եթե այն կնքելու օրվան հաջորդող տարվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցները չեն նախատեսվի:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

---

[1] *Տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում կհատկացվեն ֆինանսական միջոցներ և կկնքվի համաձայնագիր:*

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.7 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, և N 2.1 հավելվածները կազմված՝ 8 էջից, հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.9 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ	
ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն ք. Երևան, Նալբանդյան 28 Կենտրոնական Գանձապետարան Հ/Հ 900011012136 ՀՎՀՀ 02565818	Գործընկեր 1՝ «ՍԻՍԻԱՆԻ ՃԱՆՇԻՆ» ՍՊԸ Սյունիքի մարզ, գ. Շաքիի «Արդշինբանկ» ՓԲԸ, Սիսիան մ/ճ Հ/Հ 2260150007920000 ՀՎՀՀ 09802399	Գործընկեր 2՝ «ՍԻՍԻԱՆԻ ԲՈՒԱՏ» ՍՊԸ ք. Սիսիան, Խանջյան 2 «Կոնվերսբանկ» ՓԲԸ Հ/Հ 1930011791110100 ՀՎՀՀ 09802793
(ստորագրություն) Կ.Տ	(ստորագրություն) Կ.Տ	(ստորագրություն) Կ.Տ

Հավելված 1
«21» 12 2015թ. կնքված
N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-20
ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հայաստանի Հանրապետության միջպետական և հանրապետական նշանակության ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների

I. Տեխնիկական պահանջներ

1. Ապահովել միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների և արհեստական կառույցների պահպանվածությունը այնպիսի վիճակում, որը համապատասխանում է տարվա ցանկացած ժամանակ անվտանգ երթևեկության ապահովման պահանջներին:

2. Ապահովել սպասարկվող ճանապարհահատվածներին տրանսպորտի շուրջօրյա և անվտանգ երթևեկությունը համաձայն ճանապարհների պահպանման կանոնների:

3. Ընթացիկ ձմեռային (ձմեռվա ժամանակահատված) պահպանման պահանջներն են՝

- Ճանապարհների կոնստրուկտիվ տարրերի և երթևեկամասերում թույլ չտալ աղբի, ձյան և սառույցի առկայություն
- Ձյան առատ տեղումների ընթացքում թույլ չտալ 5 սմ-ից ավել շերտի գոյացում: Ուժեղ ձնաբքերի դադարելուց անմիջապես հետո սկսել և ոչ ավելի քան 4 ժամվա ընթացքում ավարտել ճանապարհների մաքրումը
- Մերկասառույցի դեմ պայքարի համար ժամանակին կիրառել աղի և ավազի ցանումը
- Աշխատանքների կատարման ընթացքում ապահովել երթևեկության անվտանգությունը
- Առատ ձյան տեղումների և ուժեղ ձնաբքերի ժամանակ, ճանապարհների մաքրման տեխնիկապես անհնարինության կամ աննպատակահարմարության դեպքում,

ճանապարհների փակումն ու բացումը կատարել Պատվիրատուի և ավտոտեսչության տեղական մարմինների համաձայնությամբ

- Ստեղծել շուրջօրյա հերթապահություն, վարել տվյալների գրանցման մատյան և ամեն օր, ժամը 6-8-ը, 12-14-ը և 18-20-ը Պատվիրատուի հերթապահությանը տվյալներ հայտնել, տեղում եղանակի ու ճանապարհների վիճակի մասին:
- Սպասարկվող ավտոճանապարհների տարածքում ունենալ առնվազն մեկ ստացիոնար հենակետ՝ ապահոված հոսանքով, կապի միջոցներով բանվորների և մեխանիզատորների համար ջեռուցվող հանգստյան սենյակով:
- Ապահովել պահպանման մակարդակի բնորոշ ցուցանիշները ՀՀ կառավարության 04.11.2010թ.-ի թիվ 1419-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության ընդանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ, ձմեռային պահպանման մակարդակների գնահատման ու կատարված աշխատանքների ընդունման կարգի» մեթոդական ցուցումների 3-րդ աղյուսակի «Ճանապարհների ընթացիկ ձմեռային պահպանման ցուցանիշների առաջադրվող պահանջների» համաձայն:

4. Ընթացիկ ամառային («ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ-ԱՇՈՒՆ» ժամանակահատված) պահպանման և շահագործման պահանջներն են՝

- Ճանապարհների շահագործման և պահպանման կանոնների համաձայն ապահովել սպասարկվող ավտոճանապարհների հետևյալ կոնստրուկտիվ տարրերի պահպանվածությունը՝
  - Հողային պաստառ և օտարման շերտ
  - Երթևեկելի մաս
- Ապահովել պահպանման մակարդակի բնորոշ ցուցանիշները ՀՀ կառավարության 04.11.2010թ.-ի թիվ 1419-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության ընդանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ, ձմեռային պահպանման մակարդակների գնահատման ու կատարված աշխատանքների կարգի» մեթոդական ցուցումների 3-րդ աղյուսակի «Ճանապարհների ընթացիկ ամառային պահպանման ցուցանիշների առաջադրվող պահանջների» համաձայն:

5. Հայաստանի Հանրապետության միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների վիճակը և սպասարկման մակարդակները 2016թ. համար՝ համաձայն N 1.1 և N 1.2 հավելվածների:

II. Ձեռքբերման պայմաններ

1. Հայաստանի Հանրապետության միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների կատարման ժամկետը սահմանվում է 5 տարի՝ 01.01.2016թ.-31.12.2020թ.:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
ք. Երևան, Նալբանդյան 28
Կենտրոնական Գանձապետարան
Հ/Հ 900011012136
ՀՎՀՀ 02565518

(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

Գործընկեր 1՝
«ՍԻՍԻԱՆԻ ՃԱՆՇԻՆ» ՍՊԸ
Սյունիքի մարզ, գ. Շաքիի
«Արդշինբանկ» ՓԲԸ, Սիսիան մ/ճ
Հ/Հ 247150000070200000
ՀՎՀՀ 09802399

(ստորագրություն)
Կ.Տ

Գործընկեր 2՝
«ՍԻՍԻԱՆԻ ԲՈՒԱՏ» ՍՊԸ
ք. Սիսիան, Խանջյան 2
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930011791110100
ՀՎՀՀ 09802798

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 1.1

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների վիճակը, սպասարկման մակարդակները և սանմանային արժեքները 2016 թ. հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը

Ավտոճանապարհի անվանումը և պիկետաժը	Ավտոճանապարհի տեխնիկական կարգը	Սպասարկվող հատվածների ընդհանուր երկարությունը /կմ/	Ճանապարհի առկա վիճակի ծածկագիրը	Սպասարկման պահանջվող մակարդակ	Սպասարկվող հատվածի երկարություն /կմ/	Միավորի գինը /հազ. դրամ/	Ընդամենը /հազ. դրամ/
1	2	3	4	5	6	7	8
Պահպանման ժամանակաշրջանը՝ ՁՄԵՌ							
Մ2, Երևան-Երասխ-Գորիս-Կապան-Իրանի սահման կմ167,6-կմ219,6	Միջպետական II-IV	52,00		Լավ	52,00	517,332	26901,264
Մ13, Մ2- Անգեղակոթ-Նախիջևանի սահման կմ0-կմ28,2	Միջպետական II-IV	28,20		Միջին	15,00	436,258	6543,870
Հ45, Մ2-Սիսիան-Դաստակերտ-Ցղունի կմ0-կմ 31,7	Հանրապետական II-IV	31,70		Լավ	8,00	409,831	3278,648
				Միջին	18,35	344,112	6314,455
Հ74, Մ2-Սիսիան կմ0-կմ4,6	Հանրապետական II-IV	4,60		Բավարար	4,60	269,893	1241,508
Հ80, Մ2-Սիսիանի օդանավակայան կմ0-կմ 0,35	Հանրապետական II-IV	0,35		Բավարար	0,35	269,893	94,463
Ընդամենը		116,85			98,30		44374,208
Պահպանման ժամանակաշրջանը՝ ԳԱՐՈՒՆ-ԱՄՍՈ-ԱԵՌԻՆ							
Մ2, Երևան-Երասխ-Գորիս-Կապան-Իրանի սահման կմ167,6-կմ219,6	Միջպետական II-IV	52,00	Երաշխիք. ՄԵ(0)	Լավ	7,50	498,787	3740,902
			Լավ ՄԼ(I)	Լավ	10,00	1030,021	10300,210
			Բավարար ՄԲ(II)	Միջին	34,50	1706,045	58858,553
Մ13, մ2- Անգեղակոթ-Նախիջևանի սահման կմ0-կմ28,2	Միջպետական II-IV	28,20	Բավարար ՄԲ(II)	Միջին	2,00	1706,045	3412,090
Հ45, Մ2-Սիսիան-Դաստակերտ-Ցղունի կմ0-կմ 31,7	Հանրապետական II-IV	31,70	Երաշխիք. ՀԵ(0)	Լավ	26,35	451,258	11890,648
Հ74, Մ2-Սիսիան կմ0-կմ4,6	Հանրապետական II-IV	4,60	Վատ		0,00	0,000	0,000
Հ80, Մ2-Սիսիանի օդանավակայան կմ0-կմ 0,35	Հանրապետական II-IV	0,35	Վատ		0,00	0,000	0,000
Ընդամենը		116,85			80,35		88202,403
Ընդամենը Սիսիանի տարածաշրջանով							132576,611

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
ք. Երևան, Նալբանդյան 28
Կենտրոնական Գանձապետարան
Հ/Հ 900011012136
ՀՎՀՀ 02565518

(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

Գործընկեր 1՝
«ՍԻՍԻԱՆԻ ՃԱՆՇԻՆ» ՍՊԸ
Սյունիքի մարզ, գ. Շաքիի
«Արդրիանի» ՓԲԸ, Սիսիան մ/ճ
Հ/Հ 247150008792000
ՀՎՀՀ 09802399

(ստորագրություն)
Կ.Տ

Գործընկեր 2՝
«ՍԻՍԻԱՆԻ ԲՈՒԱՏ» ՍՊԸ
ք. Սիսիան, Խանջյան 2
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930011791110100
ՀՎՀՀ 09802793

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 1.2

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի տարածաշրջան

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐ

I տեխնիկական կարգի միջպետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային (ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ-ԱՇՈՒՆ) պահպանման արժեքը (Հազ. ՀՀ դրամ)

Ավտոճանապարհի վիճակը (Ծածկագիր)	Տարվա կտրվածքով (ներառյալ շահույթը, սակայն առանց ԱԱՀ-ի)		
	Լավ պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը	Միջին պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը	Բավարար պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը
Երաշխիքային ՄԵ	594.222		
Լավ ՄԼ (I)	1111.457	1100.444	
Բավարար ՄԲ (II)		1634.145	1600.253

Հն N 6, Աղյուսակ 6.1

II-IV տեխնիկական կարգի միջպետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային (ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ-ԱՇՈՒՆ) պահպանման արժեքը (Հազ. ՀՀ դրամ)

Ավտոճանապարհի վիճակը (Ծածկագիր)	Տարվա կտրվածքով (ներառյալ շահույթը, սակայն առանց ԱԱՀ-ի)		
	Լավ պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը	Միջին պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը	Բավարար պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը
Երաշխիքային ՄԵ	415.656		
Լավ ՄԼ (I)	858.351	845.974	
Բավարար ՄԲ (II)		1421.704	1398.765

II-IV տեխնիկական կարգի հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային (ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ-ԱՇՈՒՆ) պահպանման արժեքը (Հազ. ՀՀ դրամ)

Ավտոճանապարհի վիճակը (Ծածկագիր)	Տարվա կտրվածքով (ներառյալ շահույթը, սակայն առանց ԱԱՀ-ի)		
	Լավ պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը	Միջին պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը	Բավարար պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը
Երաշխիքային ՄԵ	376.048		
Լավ ՄԼ (I)	854.217	832.676	
Բավարար ՄԲ (II)		1328.988	1300.788

Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ձմեռային պահպանման արժեքը (Հազ. ՀՀ դրամ)

Ավտոճանապարհի վիճակը (Ծածկագիր)	Տարվա կտրվածքով (ներառյալ շահույթը, սակայն առանց ԱԱՀ-ի)		
	Լավ պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը	Միջին պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը	Բավարար պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը
I տեխնիկական կարգի միջպետական նշանակության ավտոճանապարհներ	**711.258**	**700.417**	**680.279**
II-IV տեխնիկական կարգի միջպետական նշանակության ավտոճանապարհներ	**431.110**	**363.548**	**355.879**
II-IV տեխնիկական կարգի հանրապետական նշանակության ավտոճանապարհներ	**341.526**	**286.760**	**224.910**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
ք. Երևան, Նալբանդյան 28
Կենտրոնական Գանձապետարան
ՀՎՀՀ 900011012136
ՀՎՀՀ 02565518

(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

Գործընկեր 1՝
«ՍԻՍԻԱՆԻ ՃԱՆՇԻՆ» ՍՊԸ
Սյունիքի մարզ, գ. Շաքիի
«Արդշինբանկ» ՓԲԸ, Սիսիան մ/ճ
ՀՎՀՀ 09802399

(ստորագրություն)
Կ.Տ

Գործընկեր 2՝
«ՍԻՍԻԱՆԻ ԲՈՒՍ» ՍՊԸ
ք. Սիսիան, Խանջյան 2
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 09802793

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 2
«____» _____ 2015թ. կնքված
N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-20
ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆԱՄԱՆ-ԸՆԴՈՒՆԱՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 2.1
«____» _____ 2015թ. կնքված
N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏՇԻԳ-16/1-20
ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ N «ԳԱԿ-ԾՀԱԾՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-20»

ք. Երևան «14» դեկտեմբեր 2015թ.

«ՍԻՍԻԱՆԻ ՃԱՆՇԻՆ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն՝ Հ. Գաբրիելյանի (նույնականացման քարտի համարը՝ N 002712321 տրված է 04.04.2014թ. 051-ի կողմից), ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

1. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Հաշվի առնելով, որ Ընկերությունը մասնակցում է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների ձեռքբերման «ԳԱԿ-ԾՀԱԾՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1» ծածկագրով գնման ընթացակարգին և պետք է ներկայացնի պայմանագրի կատարման ապահովում, ուստի սույն ընթացակարգի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրի՝ Ընկերության կողմից ժամանակին և ամբողջ ծավալով կատարումն ապահովելու նպատակով Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնությունը, կից ներկայացված վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ «Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների»:

1.2. Ընկերության կողմից սույն ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը ոչ պատշաճ կատարելու, չկատարելու կամ կատարելուց հրաժարվելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնությանը կից ներկայացված վճարման պահանջագիրը ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին՝ վճարելու պահանջագրի մեջ նշված գումարը:

1.3. Պահանջագիրը բանկ ներկայացնելուց հետո տասնօրյա ժամկետում Պատվիրատուին գումարը բանկից անկախ պատճառներով չփոխանցվելու դեպքում, Պատվիրատուն Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է «ԱԲՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ» ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Տուժանքի սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից ստորագրման և կնքման պահից և գործում է մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

2.2 Սույն Համաձայնության կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«ՍԻՍԻԱՆԻ ՃԱՆՇԻՆ» ՍՊԸ
Սյունիքի մարզ, գ. Շաքիի
«Արդշինբանկ» ՓԲԸ, Սիսիան մ/ճ
Հ/Հ 2471500087920000
ՀՎՀՀ 09802399

տնօրեն՝ Հ. Գաբրիելյան
(ստորագրություն)

գլխ. հաշվապահ
(ստորագրություն)

ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ N 1

"__" _____ 20 թ.

Վճարող՝ «ՍԻՍԻԱՆԻ ՃԱՆՇԻՆ» ՍՊԸ ՀՎՀՀ - 09802399	ԴԵԲԵՏ 2471500087920000	ԳՈՒՄԱՐ 13257662
Վճարողի բանկը՝ «Արդշինբանկ» ՓԲԸ, Սիսիան մ/ճ	ԿՐԵԴԻՏ	ԳՈՒՄԱՐ (ԲԱՌԵՐՈՎ)
Շահառու՝ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն ՀՎՀՀ - 02565518		տասներեք միլիոն երկու հարյուր հիսունյոթ հազար վեց հարյուր վաթսուներկու ՀՀ
Շահառուի բանկը՝ Կենտրոնական գանձապետարան	հշ.N 900005000758	

Գումարը բառերով՝ տասներեք միլիոն երկու հարյուր հիսունյոթ հազար վեց հարյուր վաթսուներկու ՀՀ դրամ

Գնման գործընթացի ծածկագիրը ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1

Վճարման նպատակը
պատմանագրի կատարման ապահովում, տուժանքի մասին համաձայնություն՝ N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-20

Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը

Կից____էջ

Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ Կ.Տ.	Վճարողի ստորագրությունները /_____/ /_____/ Կ.Տ.
Կատարված է շահառուի բանկի կողմից /_____/ <<__>>_____20__թ. Կ.Տ.	Կատարված է վճարողի բանկի կողմից /_____/ <<__>>_____20__թ. Կ.Տ

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ N «ԳԱԿ-ԾՀԱԾՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-20»

ք. Երևան «14» դեկտեմբեր 2015 թ.

«ՍԻՍԻԱՆԻ ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն՝ Ա. Անդրեասյանի (անձնագիր՝ AK0652924 տրված է 12.11.2010թ. 051-ի կողմից), ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

1. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1.2 Հաշվի առնելով, որ Ընկերությունը մասնակցում է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների ձեռքբերման «ԳԱԿ-ԾՀԱԾՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1» ծածկագրով գնման ընթացակարգին և պետք է ներկայացնի պայմանագրի կատարման ապահովում, ուստի սույն ընթացակարգի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրի՝ Ընկերության կողմից ժամանակին և ամբողջ ծավալով կատարումն ապահովելու նպատակով Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնությունը, կից ներկայացված վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ «Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների»:

1.2. Ընկերության կողմից սույն ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը ոչ պատշաճ կատարելու, չկատարելու կամ կատարելուց հրաժարվելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնությանը կից ներկայացված վճարման պահանջագիրը ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին՝ վճարելու պահանջագրի մեջ նշված գումարը:

1.3. Պահանջագիրը բանկ ներկայացնելուց հետո տասնօրյա ժամկետում Պատվիրատուին գումարը բանկից անկախ պատճառներով չփոխանցվելու դեպքում, Պատվիրատուն Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է «ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ» ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Տուժանքի սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից ստորագրման և կնքման պահից և գործում է մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

2.2 Սույն Համաձայնության կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«ՍԻՍԻԱՆԻ ԲՈՒԱՏ» ՍՊԸ
ք. Սիսիան, Խանջյան 2
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930011791110100
ՀՎՀՀ 09802793

տնօրեն՝ Ա. Անդրեասյան
_____ (ստորագրություն)

գլխ. հաշվապահ՝
_____ (ստորագրություն)

Կ.Տ.

ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ N 1

"__" _____ 20 թ.

Վճարող՝ «ՍԻՍԻԱՆԻ ԲՈՒԱՏ» ՍՊԸ ՀՎՀՀ - 09802793	ԴԵԲԵՏ 1930011791110100	ԳՈՒՄԱՐ 13257662
Վճարողի բանկը՝ «Կոնվերսբանկ» ՓԲԸ		
Շահառու՝ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն ՀՎՀՀ - 02565518	ԿՐԵԴԻՏ	ԳՈՒՄԱՐ (ԲԱՌԵՐՈՎ) տասներեք միլիոն երկու հարյուր հիսունյոթ հազար վեց հարյուր վաթսուներկու ՀՀ
Շահառուի բանկը՝ Կենտրոնական գանձապետարան	հշ.N 900005000758	

Գումարը բառերով՝ տասներեք միլիոն երկու հարյուր հիսունյոթ հազար վեց հարյուր վաթսուներկու ՀՀ դրամ

Գնման գործընթացի ծածկագիրը ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏՄԻԳ-16/1

Վճարման նպատակը
աաամանաագոի նատառման ապահովում, տուժանքի մասին համաձայնություն՝ N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏՄԻԳ-16/1-20

Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը

Կից____էջ

Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ Կ.Տ.	Վճարողի ստորագրությունները /Ա. Անդրեասյան/ /_____/ Կ.Տ.
Կատարված է շահառուի բանկի կողմից /_____/ <<__>>_____20__թ. Կ.Տ.	Կատարված է վճարողի բանկի կողմից /_____/ <<__>>_____20__թ. Կ.Տ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՀԱՄԱՏԵՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 18.11.2015թ ԿՆՔՎԱԾ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Սիսիան <<18>> դեկտեմբերի 2015թ.

«ՍԻՍԻԱՆԻ ՃԱՆՇԻՆ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Հ. Գաբրիելյանի, ով գործում է ընկերության կանոնադրության և կողմերի միջև 18.11.2015թ կնքված համատեղ գործունեության համաձայնագրի հիման վրա, (այսուհետև՝ Գործընկեր-1), մի կողմից, և «ՍԻՍԻԱՆԻ ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ա. Անդրեասյանի, ով գործում է ընկերության կանոնադրության և կողմերի միջև 18.11.2015թ կնքված համատեղ գործունեության համաձայնագրի հիման վրա, (այսուհետև՝ Գործընկեր-2), մյուս կողմից (միասին Կողմեր) հիմք ընդունելով Կողմերի միջև 18.11.2015թ կնքված համատեղ գործունեության համաձայնագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 3.1 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կողմերը սույնով հայտնում են իրենց համաձայնությունը Պայմանագրում ներքոգրյալ լրացումները կատարելու մասին.

1.1.1 Գնման գործընթացում ընտրված մասնակից ճանաչվելու արդյունքում ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի հետ կնքվող N «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1» Պայմանագրով 2016թ.-ին նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով

<u>ա) Գործընկեր-1-ն իրականացնում է.</u>

Հայաստանի Հանրապետության Սիսիանի տարածաշրջանի ավտոճանապարհների ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքներ՝

<u>Միջպետական նշանակության ավտոճանապարհներ՝</u>

- Ա/Ճ Մ2՝ Երևան-Երաս-Գորիս-Կապան-Իրանի սահման կմ 167+600 – կմ 219+600 (52.0կմ)
- Ա/Ճ Մ-13՝ Մ2-Անգեղակոթ-Նախիջևանի սահման կմ 0+000 – կմ 15+000 (15.0կմ)

<u>Հանրապետական նշանակության ավտոճանապարհներ</u>

- Ա/Ճ Հ-74՝ Մ2-Սիսիան կմ 0+000 – կմ 4+600 (4.6կմ)
- Ա/Ճ Հ-80՝ Մ2-Սիսիանի օդանավակայան կմ 0+000 – կմ 0+350 (0.35կմ)

Հայաստանի Հանրապետության Սիսիանի տարածաշրջանի ավտոճանապարհների ընթացիկ ամառային պահպանման աշխատանքներ՝

<u>Միջպետական նշանակության ավտոճանապարհներ՝</u>

- Ա/Ճ Մ2՝ Երևան-Երաս-Գորիս-Կապան-Իրանի սահման կմ 191+000 – կմ 219+600 (28.6կմ)
- Ա/Ճ Մ-13՝ Մ2-Անգեղակոթ-Նախիջևանի սահման կմ 0+000 – կմ 2+000 (2.0կմ)

<u>Հանրապետական նշանակության ավտոճանապարհներ</u>

- Ա/Ճ Հ-45՝ Մ2-Սիսիան-Դաստակերտ-Ցղունի կմ 9+340 – կմ 26+350 (17.01կմ)

<u>բ) Գործընկեր-2-ն իրականացնում է.</u>

Հայաստանի Հանրապետության Սիսիանի տարածաշրջանի ավտոճանապարհների ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքներ՝

<u>Հանրապետական նշանակության ավտոճանապարհներ՝</u>

- Ա/Ճ Հ-45՝ Մ2-Սիսիան-Դաստակերտ-Ցղունի կմ 0+000 – կմ 26+350 (26.35կմ)

Հայաստանի Հանրապետության Սիսիանի տարածաշրջանի ավտոճանապարհների ընթացիկ ամառային պահպանման աշխատանքներ՝

<u>Միջպետական նշանակության ավտոճանապարհներ՝</u>

- Ա/Ճ Մ2՝ Երևան-Երաս-Գորիս-Կապան-Իրանի սահման կմ 167+600 – կմ 191+000 (23.4կմ)

<u>Հանրապետական նշանակության ավտոճանապարհներ</u>

- Ա/Ճ Հ-45՝ Մ2-Սիսիան-Դաստակերտ-Ցղունի կմ 0+000 – կմ 9+340 (9.34կմ)

Կողմերն իրականացնում են Հայաստանի Հանրապետության Սիսիանի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և

ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների կատարման պարտավորությունները (այսուհետև՝ Աշխատանք)՝ համաձայն N «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1»Գլխավոր պայմանագրով նախատեսված պայմանների և Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների, ինչպես նաև սույն պայմանագրին կից Հավելված 1-ի:

1.1.2 Աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվում մինչև՝ 31.12.2020թ.-ը:

1.1.3 . Կողմերի կատարման ենթակա Աշխատանքի ընդհանուր գինը 2016թ.-ի համար կազմում է՝

- **Գործընկեր-1՝ 88 022 061 (Ութսունութ միլիոն քսաներկու հազար վաթսունմեկ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:**
- **Գործընկեր-2՝ 44 554 550 (Քառասունչորս միլիոն հինգ հարյուր հիսունչորս հազար հինգ հարյուր հիսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:**

Նշված գները ներառում են Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

1.1.4 Կատարված Աշխատանքի դիմաց Պատվիրատուի կողմից վճարումները կատարվում են Գործընկեր 2-ի սույն համաձայնագրով նշված հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա Պատվիրատուի հետ կնքված համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված կարգով:

1.1.5 ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի հետ կնքվող N «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1» Պայմանագիրը ստորագրվում է Գործընկեր 1-ի և Գործընկեր 2-ի ներկայացուցիչների կողմից:

1.1.6 N «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1» Պայմանագրի շրջանակներում Աշխատանքների հանձնման-ընդունման արձանագրությունները կազմվում և ստորագրվում են Գործընկեր 2-ի կողմից:

1.1.7 N «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1» Պայմանագրի շրջանակներում առաջացող պարտավորությունների մասով հաշվապահական հաշվառումը վարում է Գործընկեր 2-ը:

1.2 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն համաձայնագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

1.3 Սույն համաձայնագիրը համարվում է Կողմերի միջև 18.11.2015թ կնքված համատեղ գործունեության համաձայնագրի անբաժանելի մասը:

1.4 Սույն համաձայնագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

1.5 Սույն համաձայնագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՈՐԾԸՆԿԵՐ-1	ԳՈՐԾԸՆԿԵՐ-2
«ՍԻՍԻԱՆԻ ՃԱՆՇԻՆ» ՍՊԸ	**«ՍԻՍԻԱՆԻ ԲՈՒԱՏ» ՍՊԸ**
ՀՀ Սյունիքի մարզ, ք. Շաքի, փ. 22/7	ՀՀ, ք. Սիսիան, Խանջյան փ.2
"Արշինբանկ" ՓԲԸ, Սիսիան" մ/հ	"Կոնվերսբանկ" ՓԲԸ, ք. Երևան
ՀՎՀՀ 24715 00867920000	Հ/Հ 1930011791110100
ՀՎՀՀ 09802399	ՀՎՀՀ 09802793
Տնօրեն _____ Ս. Գաբրիելյան	Տնօրեն _____ Ա. Անդրեասյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.